

ՀՏԴ 582.28(479.243)

Բուսաբանություն

Զոյա ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ

E-mail: zoya.57-57@mail.ru

Մարիաննա ԳԱԼՍՅԱՆ

Մարտակերտի թիվ 1 դպրոցի կենսաբանության ուսուցչուհի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ ԱՃՈՂ ՀԱԲԵԹԱՍՆԿԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին անգամ տեղեկություններ են հայտնվում Արցախում աճող հաբեթասնկերի /կամ աֆիլոֆորային սնկերի/ մասին: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են 8 ընտանիքի պատկանող 20 տեսակի սնկեր: Նրանք քսիլոտրոֆներ են՝ բնափայտ քայքայողներ՝ բացառությամբ 1 տեսակի, որը միկոռիզ է առաջացնում: Հաբեթասնկերը պատկանում են բաժին՝ բազիդիալ սնկեր, դաս՝ հիմենոմիցետներ, ենթադաս՝ աֆիլոֆորային սնկեր:

Բանալի բառեր՝ բազիդիալ սնկեր, հաբեթասունկ, սնկամարմին, պտղամարմին, բնափայտի քայքայում, քսիլոտրոֆ, միկոռիզ:

3.Петросян, М.Галстян

СВЕДЕНИЯ О ПРОИЗРАСТАЮЩИХ В АРЦАХЕ ТРУТОВИКАХ

Впервые приведены сведения о произрастающих в Арцахе трутовиках (афиллофоровых грибах). В ходе исследования выявлены 20 видов грибов, принадлежащих к 8 семействам. Все они дереворазрушающие - ксилотрофы, за исключением 1 вида, который образует микоризу. Трутовики принадлежат к отделу базидиомикот, классу гименомицетов, подклассу афиллофоровые грибы.

Ключевые слова: базидиальные грибы, трутовик, грибница, плодовое тело, разрушение древесины, ксилотроф, микориза.

Z.Petrosyan, M.Galstyan

INFORMATION ABOUT POLYPORE GROWING IN ARTSAKH

For the first time, is given information about polypore (or aphyllorphic fungi) growing in Artsakh. During the study revealed 20 species belonging to 8 families of fungi. All of them are xylotrophic-wood-destructive with the exception of one specie, which forms mycorrhiza. Polypores belongs to the section of basidial fungi, class: kennemycetkin, subclass, aphyllorphic fungi.

Key words: basidial fungi, polypore, fungi body, fruit body, wood destruction, xylotroph, mycorrhiza.

Տարբեր օրգանիզմների առանձին խմբերի կենսաբազմազանության վիճակի գնահատումը և պահպանումը ներկայիս կարևոր խնդիրներից է: Այժմ բնության պահպանությունը և բնական հարստությունների ռացիոնալ օգտագործումը ձեռք են բերել սուր էկոլոգիական, տնտեսական ու սոցիալական նշանակություն: Քանի որ չկան հետազոտություններ Արցախի հաբեթասնկերի վերաբերյալ, սույն աշխատանքը նպատակ ունի լրացնել այդ բացը: Ինչպես ամբողջ բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունը, նույն չափով խիստ արդիական է Արցախի սնկերի վերաբերյալ ցանկացած տեղեկություն: Ընդհանուր առմամբ Արցախում աճող հաբեթասնկերի մասին գիտական տեղեկություններ համարյա չկան: Սույն աշխատաքի նպատակն է ներկայացնել ԱՀ – ում աճող հաբեթասնկերը: Մեր խնդիրն է հավաքել ԱՀ տարածքի տարբեր ֆորմացիաներում, հիմնականում անտառներում, աճող մակրոմիցետներից հաբեթասնկերը, նկարագրել և որոշել նրանց տաքսոնոմիական պատկանելիությունը: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել այն սուբստրատները, որոնց վրա ապրում են հաբեթասնկերը:

Հանրապետության ոչ բոլոր տարածաշրջաններն են լիարժեք ուսումնասիրված, որը դժվարացնում է առանձին՝ այդ թվում հազվագյուտ և անհետացող տեսակների ռեսուրսների որոշումը: Գոյություն ունեցող տեսակների գենոֆոնդի պահպանման և պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել հանրապետության առանձին տարածքները, հայտնաբերել սնկերի անհետացող տեսակները և նրանց տարածվածությունը: Արցախի յուրօրինակ բնակլիմայական պայմանները, լեռնային ռելիեֆը, հարուստ բուսականությունը զգալիորեն ազդել են սնկերի բիոտայի բազմազանության վրա: Հետագա բազմակողմանի հետազոտությունների համար հիմք է ծառայում հանրապետության սնկերի տեսակային կազմի գույքագրումը:

Հաբեթասնկերը պատկանում են բաժին *Basidiomycota*, դաս՝ *Himenomycetes*, ե/դաս *Aphyllphoromycetidae*:

Հայտնի է, որ հաբեթասուսկը կազմված է միցելիումից և պտղամարմնից: Պտղամարմինը իր հերթին լինում է փռված, կիսափռված կամ էլ գլխարկի ձևով՝ սմբականման, հարթ, բարձիկանման և այլն: Սովորաբար սուբստրատին ամրանում են գլխիկի, երբեմն էլ ոտիկի օգնությամբ:

Հաբեթասնկի պտղամարմինը կազմված է անպտուղ հյուսվածքից և պտղատու հիմենոֆորից, որը տեղադրված է գլխիկի ներքևում, որոնք բաղկացած են խողովակներից և երբեմն՝ խողաններից ու ատամիկներից:

Հիմենոֆորը պատված է պտղակիր շերտով՝ հիմենիումով, որը կազմված է բազիդիումներից իր բազիդոսպորներով և անպտուղ տարրերից՝ ցիստիդներից, պարաֆիզներից և քիստերից:

Հաբեթասները տարածված են տարբեր ծառատեսակների (կաղնի, բոխի, տխլենի և այլն) վրա: Նրանց սպորները ծլարձակելով ծառերի կեղևի վնասված հատվածներում, առաջացնում են սնկամարմին: Սնկամարմինը տարածվում է բնափայտով, սնվում ծառի սննդանյութերի հաշվին, և ի վերջո քայքայում ու փչացնում է ծառը:

Վարակվելուց մի քանի տարի անց ծառի կեղևի վրա առաջանում է սնկի սմբակաձև ամուր պտղամարմինը: Պտղամարմնի ստորին մասում գտնվող խողովակներում հասունանում են սպորները:

Հաբեթասների պտղամարմինը հիմնականում բազմամյա է և ամեն տարի աճելով նոր շերտեր է առաջացնում, որոնց թվով կարելի է հաշվել նրանց տարիքը: Հաբեթասներով վարակված ծառերն ժամանակի ընթացքում մահանում են:

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք այն սուբստրատները, որոնց վրա բնակվում են մեր հայտնաբերած սնկերը:

Օրինակ՝ *Cantharellus cibarius*-ը աճում է ծառերի տակ, փտած բնափայտի կոճղերին կամ հողի վրա, համարվում է միկոռիզ: *Coriolus versicolor*-ը աճում է լայնատերև տեսակների մահացած բնափայտի վրա: *Polyporus squamosus*-ը աճում է կենդանի և մահացած ծառերի վրա՝ կաղնի, հաճարենի, բոխի, խնձորենի, ընկուզենի և այլն: Երիտասարդ տեսակներն ուտելի են: *Ganoderma lucidum* –ը առաջացնում է փայտանյութի թույլ փտում: *Ganoderma applanatum* –ը առաջացնում է բնափայտի ակտիվ փտում (սպիտակ փտում): /7/

Տեսակների քանակով առաջին տեղն զբաղում է *Polyporaceae* ընտանիքը (6 գեղ, 8 տեսակ)՝ *Coriolus pubescens*, *C. versicolor*, *Fomes fomentarius* (L.), Kickx, *Daedalea quercina*, *Hirschioporus pergamenus*, *Poliporus squamosus* (Huds), Fr., *Trametes hirsuta* (Wulfen; Fr.) Pilat, Tr. *versicolor* (L.; Fr.), Pilat:

Hymenochaetaceae ընտանիքը ներկայացված է 2 գեղ՝ (*Inonotus* և *Phellinus*) և 3 տեսակով՝ *Inonotus hispidus*, *Phellinus pomaceus* և *Ph. ribis*:

Հայտնաբերված սնկերի 3 ընտանիքներ ներկայացված են 1-ական գեղերով, յուրաքանչյուրից 2-ական տեսակ: Դրանք են՝ *Peniophora nuda* և *P. violacea* (*Cortiliaceae* ընտանիք), *Hydnellum aurantiacum* և *H. compactum* (*Thelephoraceae* ընտանիք), *Ganoderma lipsiense* և *G. lucidum* (*Ganodermataceae* ընտանիք):

Մյուս 3 ընտանիքներին են պատկանում 1-ական տեսակներ՝ *Schyzophyllaceae* ընտանիքից՝ *Schyzophyllum commune* Fr., *Stereaceae* ընտանիքից՝ *Stereum hirsutum* (Willd.) Pers, և *Cantharellaceae* ընտանիքից՝ *Cantharellus cibarius*:

Աղյուսակ

Հայտնաբերված հաբեթասնկերն ըստ ընտանիքների

Ընտանիք	Ցեղ	Տեսակ	Հայտնաբերման վայր
Corticiaceae	Peniophora	P.nuda P.violaceae	
Thelephoraceae	Hydnellum	H.aurantiacum H.compactum	Չափար
Stereaceae	Stereum	S.hirsutum	Մարտակերտ Հաղրուր, Շուշի
Hymenochaetaceae	Inonotus	I.hispidus	Ստեփանակերտ Հաղրուր Մարտունի
	Phellinus	Ph.pomaceus Ph.ribis	Չափար
Ganodermataceae	Ganoderma	G.lipsiense G.lucidum	Ն.Հոռաթաղ Գիշի
Schizophyllaceae	Schizophyllum	Sch.commune	Ստեփանակերտ
Polyporaceae	Coriolus	C.pubescens C.versicolor	Գիշի Վարդաձոր
	Daedalea	D.quercina	Մարտակերտ
	Fomes	F.fomentarius	<<Մնդրեկան>> Ստեփանակերտ
	Hirschiporus	H.pergamenus	Ստեփանակերտ Մարտակերտ
	Polyporus	P.squamosus	Այգեստան Չափար, Զազլիկ Ակնաղբյուր
	Trametes	T.hirsuta T.versicolor	Ակնաղբյուր Խնածախ Ստեփանակերտ Գիշի, Խնածախ
Cantharellaceae	Cantharellus	C.cibarius	Բադարա Վարդաձոր

Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից՝ հաբեթասնկերը լայն տարածված են ամբողջ Արցախում: Սակայն սա դեռևս վերջնական արդյունք չէ, և ուսումնասիրությունները շարունակական կլինեն:

Այսպիսով՝ ուսումնասիրությունների ընթացքում Արցախի հանրապետության տարածքում հայտնաբերել ենք 20 տեսակի աֆիլոֆորային սնկեր, որոնք պատկանում են 8 ընտանիքի: Մեր

ուսումնասիրած աֆիլոֆորային սնկերը քսիլոտրոֆ սնկեր են, ապրում են մահացած և կենդանի բնափայտի վրա, առաջացնելով բնափայտի տարբեր տեսակի փտում՝ գորշ, սպիտակ, թույլ, ակտիվ: Հավաքած սնկերից միայն մեկ տեսակ՝ *Cantharellus cibarius* –ը ապրում է հողի վրա՝ ծառերի տակ, փտած բնափայտի վրա:

Գրականություն

1. Մելքումյան Ս. Ս. Հայաստանի հանրապետության և ԼՂՀ-ի տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան, 2005
2. Бондарцева М.А., Пармasto Э. Х. Определитель грибов СССР. Порядок Афиллофоровые. Вып. 1- Л. Наука, 1986, 191 с.
3. Бондарцев А.С., Зингер Р.А. Руководство по сбору высших базидиальных грибов для научного их изучения. Труды Бот. Ин-та АН СССР, серия II, вып.6, 1960
4. Бондарцева М.А. Определитель грибов России. Порядок афиллофоровые. Вып.2. Наука, 1998
5. Гусейнова Б.Ф. Макромицеты Нагорного Карабаха. Баку, 1967
6. Жизнь растений. Том 2. Грибы. Под ред. М.В. Горленко. М. Просвещение, 1978
7. Мартиросян С.Н. Микофлора Армянской ССР. В 7 т. Ереван, Изд-во ЕГУ, 1971. Т. 2, ч. 2. Афиллофоровые грибы с.124-344.

Հոդվածը տպագրության է երաշխավորվել իմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ., Շ. Գ. Գալստյանը: